***Կարգապահական գործ թիվ ԿԳ-18200***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 213 ԿԳ նիստի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/135-Ա

## ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի կազմով[1],

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ 999) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

**1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

29.11.2018թ-ին Պալատ է մուտքագրվել Արսեն Բենիկի Չիչյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է, որ իր նախկին փաստաբան Լուսինե Սահակյանը, ով 2013թ-ին իրականացրել է իր պաշտպանությունը թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործով, ներկայումս իրականացնում է իր հակառակորդի շահերի պաշտպանությունը՝ առանց Դիմողի համաձայնությունը ստանալու: Լուսինե Սահակյանը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում հանդես է գալիս պատասխանողի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի ներկայացուցչի կարգավիճակով՝ իրականացնելով կոնկրետ գործողություններ, որոնք ուղղված են իր շահերի դեմ: Մասնավորապես, Լուսինե Սահակյանը դատարան է ներկայացրել մի միջնորդություն, որով խնդրել է վերսկսել իր օգտին ավարտված գործը, իսկ միջնորդության բովանդակությունը վերաբերում է նրան, որ Դիմողի հայցն ըստ էության պետք է մերժվի:

Նույն գործով Լուսինե Սահակյանը՝ որպես Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի ներկայացուցիչ ՀՀ վերաքննիչ դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք, որով խնդրել է բեկանել թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով Դիմողի օգտին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.09.2018թ. կայացված վճիռը՝

[1] 29.05.2019թ. Խորհրդի նիստին Խորհրդի անդամներ Արայիկ Ղազարյանը և Սեդրակ Ասատրյանը հայտնել են ինքնաբացարկ:

ներկայացնելով նաև միջնորդություն վճռի կատարումը կասեցնելու մասին:

Դիմողը նշել է, որ Լուսինե Սահակյանը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով, ներկայացնելով Դիմողի հակառակորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի անունից միջնորդություններ, վերաքննիչ բողոք իրավաբանական օգնություն է ցույց տալիս իր նախկին վստահորդի՝ Դիմողի շահերին հակառակ:

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 27.12.2018թ. թիվ 491-Ա/ԿԳ-18200 որոշմամբ փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրիք)** 3.2.5 և 3.2.8 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

08.01.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

**3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>**

25.12.2018թ. Դիմողը ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ 2013թ-ից առ այսօր պաշտպանվում է Երվանդ Վարոսյանի, Լուսինե Սահակյանի, վերջինիս ընտանիքի անդամներ Արգիշտի և Արամազդ Կիվիրյանների գործելակերպից: Հայտնել է նաև, որ իր ներկայացուցչից պարզել է, որ ներկայացված գրությունը թյուրիմացաբար է ներկայացվել՝ տեղեկանքի փոխարեն:

Խորհրդի նիստում Դիմողը պնդել է իր դիմումում նշված հանգամանքները, ինչպես նաև հայտնել, որ 13.11.2013թ. Դիմողը նվիրատվությամբ ստացել է որոշակի գույքեր: Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի կողմից կազմվել է հայտարարություն, որով հայտնվել է, որ 14 անուն գույք պետք է նվիրվի Դիմողին: Այդ գույքերից 12-ի նկատմամբ գրանցվել է Դիմողի սեփականության իրավունքը: Նշյալ գործարքի շրջանակներում Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանին ներկայացրել է փաստաբան Երվանդ Վարոսյանը: Դրանից հետո՝ ներառյալ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի մահից հետո նվիրատվության պայմանագիրը սկսել է չկատարվել, ինչի հետևանքով Դիմողը դիմել է դատարան նվիրատվության պայմանագրի չկատարված մասով նվիրատվությունը ստանալու նպատակով, որը կայացրել է բացասական դատական ակտ: Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի, ապա նրա իրավահաջորդի ներկայացուցիչ է հանդես եկել Պատասխանողն այն դեպքում, երբ նախկինում Պատասխանողը և փաստաբան Երվանդ Վարոսյանը ներկայացրել են Դիմողի շահերը քրեական գործով, որպիսի պայմաններում առկա է արգելք, որպեսզի Պատասխանողը, առանց Դիմողի գրավոր համաձայնության, ներկայացներ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի և նրա իրավահաջորդի շահերը, ինչպես նաև Դիմողի շահերի պաշտպանության ընթացքում Պատասխանողին հայտնի են դարձել որոշակի տեղեկություններ նվիրատվության գործարքի

հանգամանքների վերաբերյալ, ինչը ևս անհնարին էր դարձնում Պատասխանողի ներկայացուցչությունը Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի և նրա իրավահաջորդի կողմից:

Ըստ Դիմողի՝ Պատասխանողը, ելնելով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից, իրավունք չուներ ներկայացնել Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի շահերը քաղաքացիական գործով այն դեպքում, երբ ներկայացրել է Դիմողի շահերը նախկինում քրեական գործով, եթե առկա չէ Դիմողի գրավոր համաձայնությունը, որը տվյալ դեպքում բացակայում է: Նշանակություն չունի այդ գործերի ընթացքը և ելքը: Պատասխանողը հնարավորություն ուներ ստանալ Դիմողի գրավոր համաձայնությունը նախքան Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի շահերի պաշտպանությունն ստանձնելը, ինչը չի արել: Ըստ Դիմողի՝ ներկայացված իրավական պահանջը հստակ է և տարընթերցման տեղիք չի տալիս:

Դիմողի կողմից ներկայացվել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի՝ նվիրատվության հայտարարությունը:

Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ Դիմողի շահերը Պատասխանողը ներկայացրել է խուլիգանության գործի շրջանակներում, իսկ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդի շահերը ներկայացանում է իր կողմից նշված պայմանագրերի վավերականության վիճարկման վերաբերյալ գործի շրջանակններում, որոնք փոխկապակցված չեն: Դիմողի ներկայացուցիչը հավելել է, որ փոխկապակցված չլինելու հանգամանքը չի կարող էական նշանակություն ունենալ շահերի բախման հարցը քննարկելիս: Դիմողի ներկայացուցիչը, պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին, հայտնել է նաև, որ պայմանգրերի կնքման պայմաններին ծանոթ լինելը կարող է անբարենպաստ արտոնություն ստեղծել Դիմողի նկատմամբ: Դիմողի ներկայացուցիչը նշել է նաև, որ այն հանագմանքը թե Դիմողը Պատասխանողին ինչ բնույթի տեղեկատվություն է հայտնել կարող է քննարկվել միայն Կանոնգրքի 3.2.8. ենթակետի շրջանակներում, իսկ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի շրջանակներում տեղեկատվություն հայտնելու կամ չհայտնելու հանգամանքը որևէ նշանակություն ունենալ չի կարող: Պատասխանելով Պատասխանողի հարցերին՝ Դիմողը հայտնել է, որ նշված հայտարարությունը կազմվել է Պատասխանողի կողմից և այդ օրը Պատասխանողը գտնվել է հիվանդանոցում:

Պատասխանողը հարց է ուղղել Դիմողի ներկայացուցչին, թե որտեղից է նրան հայտնի, որ Պատասխանողը հանդիսացել է Դիմողի ներկայացուցիչը 13.11.2013թ. և կարող է այդ փաստը հաստատող ապացույցներ ներկայացնել, ինչին Դիմողի ներկայացուցիչը պատասխանել է, որ առկա են ապացույցներ առ այն, որ Պատասխանողը և փաստաբան Երվանդ Վարոսյանը հանդիսացել են Դիմողի ներկայացուցիչները, դատական ակտը կայացվել է 14.10.2013թ., իսկ ուժի մեջ է մտել 14.11.2013թ.: Հավելել է նաև, որ ըստ Դիմողի կողմից փոխանցված տեղեկության Պատասխանողը տեղյակ է եղել է գործարքներից:

Պատասխանելով Պատասխանողի հարցերին Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ Դիմողի կողմից հայցը ներկայացվել է, երբ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանը չէր մահացել: Պատասխանողի այն հարցին, թե երբ է Պատասխանողը հանդիսացել Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի ներկայացուցիչը, Դիմողը պատասխանել է, որ իր տեղեկությամբ՝ Պատասխանողը հանդիսացել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի ներկայացուցիչը 2010թ. հետո: Պատասխանողի ճշգրտող հարցին, թե արդյոք նախքան իր փաստաբանը հանդիսանալը՝ մինչև 2012թ. Պատասխանողը հանդիսացել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի փաստաբանը, Դիմողը հայտնել է, որ մինչև 2012թ. Պատասխանողը

ներկայացրել է մի քանի գործերով Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի, Մեթալ Փրինսի շահերը, որի սեփականատերը եղել են ինքը և Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանը: Պատասխանողը հարց է ուղղել Դիմողին, թե արդյոք Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է պայմանագիր, ինչին Դիմողը բացասական պատասխան է տվել և հայտնել է, որ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյան է ասել, որ Պատասխանողը ներկայացնի իր շահերը:

Պատասխանողի այն հարցին, թե ինչ տեղեկատվություն է Դիմողը փոխանցել իրեն Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի հետ գործարքների կնքման վերաբերյալ Պատասխանողից խորհրդատվություն ստանալիս, Դիմողը պատասխանել է, որ դա Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի նվիրատվության հայտարարությունն է, որ կազմվել է Պատասխանողի և փաստաբան Երվանդ Վարոսյանի կողմից, և նրանք ներկա են եղել նվիրարատվության գործարքի կատարմանը:

Խորհրդի անդամի հարցերին պատասխանելով՝ Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ ըստ Դիմողի՝ «Հայտարարություն» վերտառությամբ փաստաթղթի բովանդակությանը տիրապետել է Պատասխանողը, որը վիճարկվել է դատական կարգով Պատասխանողի կողմից, այլ ապացույցներ բացի Դիմողի բացատրությունից չեն կարող ներկայացնել:

Դիմողի ներկայացուցիչը ամփոփելով՝ հավելել է, որ Օրենքի 20-րդ հոդվածի համատեքստում առկա է կարգապահական խախտում՝ Պատասխանողը իրավական օգնություն է տրամադրել Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյան, Արսեն Չիչյանին, իսկ այնուհետև հանդես է եկել ընդդեմ Արսեն Չիչյանի, իսկ Պատասխանողն իր բացատրությամբ նշել է, որ առկա չէ Դիմողի կողմից տրված համաձայնություն:

**3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

13.12.2018թ. Պալատ մուտքագրված գրությամբ Պատասխանողը հայտնել է, որ ստացել է Արսեն Բենիկի Չիչյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ա. Զոհրաբյանին հասցեագրված դիմումը, որով Ա. Չիչյանը պահանջում է իրեն ենթարկել կարգապահական պատասխանատվության: 2018թ. աշնանը, Արսեն Չիչյանի ներկայացուցիչ Սիմոն Բաբայանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացրել է իրեն որպես ներկայացուցիչ գործի վարույթից հեռացնելու մասին միջնորդությունը (որը մերժվել է), որին կից, սակայն, ներկայացվել էր ոչ թե միջնորդության մեջ նշված փաստաթուղթը, այլ՝ ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի նամակն ուղղված Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանին ինչ-որ միջոցառման, ինչ-որ փաստաբանների ներգրավման մասին: Իր մոտ բնական հարց է առաջանում, թե նման պայմաններում, արդյոք իմաստ ունի, որ ինքը փորձի բացատրել, թե ինչ է շահերի բախում հասկացությունը, որ Արսեն Չիչյանի պաշտպանությունն իրականացրել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի խնդրանքով, որ Արսեն Չիչյանն իր հետ որևէ պայմանագիր չի կնքել, որ ինչպես Արսեն Չիչյանի պաշտպանությունն իրականացնելիս, այնպես էլ դրանից առաջ ու հետո հանդիսացել է Ս. Դեր-Բողոսսյանի փաստաբանը, այն Ս. Դեր-Բողոսսյանի, ում դեմ և հայց է ներկայացրել նրա նախկին մտերիմ Արսեն Չիչյանը, որ անգամ տեսականորեն չի կարող գոյություն ունենալ որևէ փաստական հանգամանք, որ իրեն կարող էր հայտնի դառնալ Ա. Չիչյանի պաշտպանությունն իրականացնելիս և որը օգտագործելի կլիներ նրա կողմից ներկայացված հայցի գործով և այլն:

Պալատի Խորհրդի նիստում Պատասխանողը հայտնել է, որ Դիմողի շահերը դատական ակտը կայացնելուց հետո նրա շահերը չի ներկայացրել:

Պատասխանողը հայտնել է, որ շուրջ տասնհինգ տարի ինքը ներկայացնում է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի և նրա ընկերությունների շահերը, իսկ այդ ընկերությունների բաժնետեր երբեք չի եղել Դիմողը: Ինքը երկար տարիներ ներկայացրել է Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի, Մեթալ Փրինսի շահերը, իր վստահորդը հանդիսացել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանը և նրա կազմակերպությունները, Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի հանձնարարությամբ իրենք ներկայացրել են նաև որոշ անձանց շահերը, այդ թվում Դիմողի շահերը: Այն գործը, որով ներկայացրել  Դիմողի շահերը առնչվել են նաև Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանին: Պատասխանողը նշել է, որ Դիմողը երբեք չի հանդիսացել իր վստահորդը, այլ կարճ ժամանակահատվածում իր պաշտպանյալը:

Պատասխանողն ընդունել է, որ ներկայացրել է և՛ Դիմողի, և՛ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի շահերը, և պնդել է, որ սկզբում ներկայացրել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի շահերը և ոչ միայն այդ քրեական գործով, իսկ Դիմողի շահերը ներկայացրել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի շահերի պաշտպանության շրջանակներում, քանի որ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի և Դիմողի շահերը եղել են նույնական և Դիմողին պաշտպանելով՝ պաշտպանել է նաև Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանին:

Պատասխանողը հայտնել է նաև, որ բողոքում, որը ինքը ներկայացրել է, բացառապես բարձրացված է միայն իրավական հարցադրումներ, որևէ տեղեկություն չկա, որը կարող էր իրեն հայտնած լիներ որևէ մեկից, բացի այդ  քրեական և քաղաքացիական գործերի միջև որևէ կապ չկա և շահերի բախում, այսինքն՝ այնպիսի տեղեկատվություն, որն իրեն հայտնի դարձած լիներ քրեական գործից, որն էլ ինքը կարողանար բերել և օգտագործել այդ քաղաքացիական գործի շրջանականներում բնականաբար չկար: Պատասխանողը հերքել է, որ Դիմողի կողմից իրեն հայտնված և փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն է ստացել կամ օգտագործել՝ ներառյալ ի վնաս Դիմողի:

Երբ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի և Դիմողի հարաբերությունները վատթարացել են և Դիմողը դիմել է դատարան ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի, Պատասխանողը Դիմողին իրավաբանական օգնություն չի տրամադրել: Իր իրական վստահորդը միշտ եղել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյան, այժմ էլ նրա իրավահաջորդը, և ինքը շարունակելու է նրա շահերը ներկայացնել:

Անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածին՝ Պատասխանողը նշել է, որ եթե կա 20-րդ հոդվածը, ապա մյուս ձևակերպումները չպետք է լինեին, քանի որ եթե չի կարող ուրեմն չի կարող ու եթե ստացվում է, որ իր վստահորդը խնդրել է, որ ինքը ներկայացնի նաև Արսեն Չիչյանի շահերը, ապա ստացվում է, որ ինքը պետք է մնա Արսեն Չիչյանի գերին, որովհետև ինքը չի կարող հետագայում իր իրական վստահորդի շահերը պաշտպանել, երբ Արսեն Չիչյանը հայց է ներկայացրել իր վստահորդի դեմ: Նման բան ըստ Պատասխանողի չի կարող լինել, և շահերի բախումը պետք է առկա լինի կոնկրետ գործով և պետք է այնպես լինի, որ իրեն վստահորդից հայտնի դարձած տեղեկությունը չկարողանա օգտագործել նրա դեմ, այլապես դա կհանդիսանա իրավունքի լուրջ խախտում:

Պատասխանողը նշել է նաև, որ «վստահորդ» հասկացությունը պետք է դիտարկել քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում, որտեղ հստակ տարանջատում կա վստահորդի և պաշտպանյալի միջև, հետևաբար այս հարցը չի կարող կարգավորվել միայն Կանոնագրքի համատեքստում: Ելնելով քրեական դատավարության օրենսգրքից ևս, Պատասխանողի վստահորդը եղել է ոչ թե Դիմողը, այլ՝ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանը, քանի որ Պատասխանողը պայմանագիր է կնքել ոչ թե Դիմողի, այլ՝ Սերոփ-Գորիոն Դեր-

Բողոսսյանի հետ, հետևաբար Պատասխանողը չգործելու պարտականություն չի ունեցել: Ըստ Պատասխանողի՝ շահերի բախման հարցերը քննարկելիս պետք է առաջնորդվել ոչ թե Օրենքով, այլ՝ քաղաքացիական կամ քրեական դատավարության օրենսգրքերով՝ կախված նրանից, թե փաստաբանը վստահորդին ներկայացնում է քաղաքացիական, թե՝ քրեական վարույթում: Անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածին՝ նշել է, որ այնտեղ նշվում է վստահորդ, իսկ քրեական դատավարությունում ընդամենը մի քանի տեղ է այդ տերմինը և հստակ տարանջատում է առկա վստահորդ և պաշտպանյալի միջև: Այդ լույսի ներքո իր վստահորդը եղել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի, քանի որ նա է իրեն վճարել, պայմանագիրը կնքել:

Խորհրդի անդամ Գայանե Դեմիրչյանի այն հարցադրմանը, որ Օրենքում պաշտպանյալ տերմինը չի օգտագործվում և ըստ Պատասխանողի արդյոք Օրենքը տարածվում է քրեական գործերով մասնակցող փաստաբանների վրա, թե՝ ոչ, Պատասխանողը հայտնել է, որ եթե կա երկու օրենքների միջև խզում, ապա պետք է նայել այն օրենքի տիրույթում որում գործում է փաստաբանը, այսինքն՝ քրեական դատավարության կամ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով: Պատասխանողը նշել է նաև, որ կարգապահական վարույթի քննությունը պետք է իրականացվի կարգապահական վարույթի շրջանակներում:

Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին շահերի բախման վերաբերյալ իր կողմից նախկինում արտահայտած դիրքորոշումների վերաբերյալ՝ Պատասխանողը հայտնել է, որ իր դիրքորոշումը չի փոխվել, և եթե իրեն Դիմողի կողմից տեղեկատվություն տրամադրված լիներ, ապա ինքը չէր մասնակցի, ցանկացած պարագայում պետք է ելնել կոնկրետ գործի հանգամանքներից, իրավիճակից, փաստերից:

Դիմողի ներկայացուցչի այն հարցին, թե արդյոք առկա է Դիմողի գրավոր համաձայնությունը այլ անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ՝ Պատասխանողը հրաժարվել է պատասխանել՝ նշելով նաև, որ իր պայմանագիրը Դիմողի հետ չի կնքված, ուստի այդ մասով չի կարող աշխատել:

Պատասխանելով խորհրդի անդամների հարցերին՝ Պատասխանողը հայտնել է, որ Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացված «Հայտարարություն» վերտառությամբ փաստաթուղթը չի կարող քննարկվել սույն կարգապահական վարույթի շրջանակներում, քանի որ այն դուրս է կարգապահական վարույթի շրջանակներից, այդ մասով վարույթ չկա հարուցված: Բայց եթե ինքը ծանոթ է եղել այդ փաստաթղթին, ապա ինչպես նշեց Դիմողը, միայն Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի կողմից տրամադրված տեղեկատվությունից:

Պատասխանողը նշել է նաև, որ եթե Օրենքի 20-րդ հոդվածը տարընթերցման տեղիք է տալիս, ապա՝ այդ նորմի խախտման համար որևէ մեկը չի կարող պատասխանատվության ենթարկվել:

Խորհրդի անդամի այն հարցին, որ արդյոք ճիշտ է հասկանում, որ ըստ Լուսինե Սահակյանի առերևույթ միգուցե կա խախտման հատկանիշի առկայություն, բայց քանի որ բովանդակային բացասական հետևանք չի առաջացրել հետևաբար չի կարող խախտումը լինել իրական, Պատասխանողը հայտնել է, որ այդպես կարող ենք ասել, խնդիրը նա է, որ այդ օրենքն այնպիսի ձևակերպում ունի, որ եթե տարընթերցման տեղիք է տալիս, ուրեմն այդ օրենքի ուժով ոչ մեկ չի կարող ենթարկվել պատասխանատվության:

Պատասխանողը նշել է նաև, որ եթե ինքը հայտարարությունը գրած լիներ Դիմողի կողմից, իսկ հետո Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանի կողմից վերաքննիչ բողոք ներկայացներ, ապա՝ այդ դեպքում խնդիր կլիներ:

30.08.2019թ. Խորհրդի նիստին Պատասխանողը բացարկի միջնորդություններ է ներկայացրել Խորհրդի անդամներ Մելանյա Առուստամյանին, Նելլի Հարությունյանին և Տիգրան Խուրշուդյանին, որոնք Խորհրդի կողմից մերժվել են[2]:

**3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>**

06.03.2019թ. կարգապահական գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որով հաստատված է համարել հետևյալ փաստերը.

- Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործը, որով Արսեն Չիչյանն ունեցել է մեղադրյալի (ամբաստանյալի) դատավարական կարգավիճակ:
- Նշված քրեական գործով ամբաստանյալ Արսեն Չիչյանի շահերի պաշտպանությունն իրականացրել են փաստաբաններ Երվանդ Վարոսյանը, Ռուբեն Հակոբյանը և Լուսինե Սահակյանը:
- Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործն ըստ հայցի Արսեն Չիչյանի ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի (երրորդ անձիք՝ «Արդշինբանկ» ՓԲԸ և «Արարատբանկ» ՓԲԸ)՝ նվիրատվության պայմանագիրը կնքված ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:
- Նշված քաղաքացիական գործով պատասխանող Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի շահերի ներկայացուցչությունն իրականացրել են փաստաբաններ Լուսինե Սահակյանը և Դիանա Գրիգորյանը: Ներկայացուցիչ Լուսինե Սահակյանի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել դիմում՝ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու մասին, ապա միջնորդություն՝ գործի վարույթը վերսկսելու և պատասխանողի դատավարական իրավունքները վերականգնելու մասին:
- Դիմող Արսեն Չիչյանի շահերը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում իրականացրել են փաստաբաններ Արսեն Հարությունյանը, ապա նաև՝ Սիմոն Բաբայանը:
- Հայցվոր Արսեն Չիչյանի ներկայացուցիչ Սիմոն Բաբայանի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել փաստաբան Լուսինե Սահակյանին որպես ներկայացուցիչ գործի վարույթից հեռացնելու մասին միջնորդություն՝ այն պատճառաբանությամբ, որ վերջինս մեկ այլ՝ թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործով որպես պաշտպան ներկայացրել է մեղադրյալ Արսեն Չիչյանի շահերը: Նշված միջնորդությունը դատարանի որոշմամբ մերժվել է:
- Արսեն Չիչյանի կողմից չի ներկայացվել իր շահերի պաշտպանությունն իրականացնելու վերաբերյալ իր և փաստաբան Լուսինե Սահակյանի միջև կնքված որևէ պայմանագիր, ինչպես նաև չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ թիվ

[2] Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանին հայտնված բացարկի միջնորդությունը չի քննարկվել՝ նկատի ունենալով, որ Խորհրդի անդամը նիստին չի մասնակցել:

ԼԴ/0006/01/13 քրեական գործով իր շահերի պաշտպանությունն իրականացնելու ընթացքում որևէ ենթադրյալ փաստական հանգամանք է հայտնի դարձել պաշտպան (փաստաբան) Լուսինե Սահակյանին կամ վերջինս այն օգտագործել է Արսեն Չիչյանի կողմից ներկայացված հայցի շրջանակներում քննվող քաղաքացիական գործով:

- Փաստաբան Լուսինե Սահակյանը հանդիսացել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի ներկայացուցիչը (փաստաբանը) ինչպես թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործով մեղադրյալ Արսեն Չիչյանի պաշտպանությունն իրականացնելիս, այնպես էլ դրանից առաջ և հետո՝ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի մահվանից հետո հանդիսանալով նաև վերջինիս իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի ներկայացուցիչը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 11.03.2019թ., Խորհրդի նիստերը տեղի է ունեցել 29.05.2019թ., ժամը՝ 18:30-ին, 30.08.2019թ., ժամը՝ 18:30-ին և 06.09.2019թ., ժամը 18:45-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում (4-րդ հարկ թիվ 12 սենյակում):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործը, որով Արսեն Չիչյանն ունեցել է մեղադրյալի (ամբաստանյալի) դատավարական կարգավիճակ: Նշված քրեական գործով ամբաստանյալ Արսեն Չիչյանի շահերի պաշտպանությունն իրականացրել է նաև փաստաբան Լուսինե Սահակյանը (Տես՝ կ.գ.թ.[3] 34-83):

- Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործն ըստ հայցի Արսեն Չիչյանի ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի, այնուհետև՝ վերջինիս իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի (երրորդ անձիք՝ «Արդշինբանկ» ՓԲԸ և «Արարատբանկ» ՓԲԸ)՝ նվիրատվության պայմանագիրը կնքված ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

- Նշված ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ռ.Ափինյան) 14.09.2018թ. կայացրել է վճիռ, որով հայցը բավարարել է, և մասնավորապես վճռել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի

[3] Կարգապահական գործի թերթ

13.11.2013թ. և Արսեն Բենիկի Չիչյանի միջև ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7, բնակարան 1 հասցեում գտնվող և ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 1ա հասցեում գտնվող, անշարժ գույքերի մասով նվիրատվության պայմանագիրը ճանաչել կնքված (Տես՝ կ.գ.թ. 106-114):

- Նշված ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով Վանիս Կորյունի Դեր-Բողոսսյանի շահերի ներկայացուցչությունն իրականացրել է փաստաբան Լուսինե Սահակյանը, մասնավորապես՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել փաստաբան Լուսինե Սահակյանը (Տես՝ կ.գ.թ. 95).

- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը մասնակի բավարարել է, բեկանել է առաջին ատյանի դատարանի վճիռը փոփոխել է մերժելով հայցը (Տես՝ կ.գ.թ. 95):

- Դիմող Արսեն Չիչյանի շահերը թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում իրականացրել են փաստաբաններ Արսեն Հարությունյանը և Սիմոն Բաբայանը:

- Փաստաբան Լուսինե Սահակյանը Պալատի խորհրդին չի ներկայացրել իր նախկին վստահորդ Արսեն Չիտչյանի կողմից տրված համաձայնությունը, հետագայում նրա շահերին հակառակ այլ վստահորդներին իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ:

*Նշված փաստերը հաստատվում են կարգապահական գործի նյութերով, մասնավորապես՝ Դիմողի դիմումով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից տպված քաղվածքներով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լուսինե Սահակյանը փաստաբան է հանդիսանում 12.11.1996թվականից և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում Լուսինե Սահակյանի նկատմամբ 14 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ:

Խորհրդի 14.12.2017թ. թիվ ԿԳ/127-Ա, 14.12.2017թ. թիվ ԿԳ/128-Ա, 20.03.2018թ. թիվ ԿԳ/56-Ա, 07.04.2018թ. թիվ ԿԳ/66-Ա, 15.05.2018թ. թիվ ԿԳ/84-Ա, 15.05.2018թ. թիվ ԿԳ/85-Ա, 24.05.2018թ. թիվ ԿԳ/92-Ա որոշումներով պատասխանող Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 17.03.2016թ. թիվ ԿԳ/66-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի խախտման համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով՝ 8 ժամ ժամաքանակով: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 25.01.2018թ. թիվ ԿԳ/08-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 10.04.2018թ. թիվ ԿԳ/72-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 10.04.2018թ. թիվ ԿԳ/73-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 03.05.2018թ. թիվ ԿԳ/80-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Խորհրդի 08.05.2019թ. թիվ ԿԳ/44-Ա որոշմամբ Լուսինե Սահակյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար: Լուսինե Սահակյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն: Որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

**7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

*Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Սահակյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.5 ենթակետի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.*

**7.1 Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.5 ենթակետի մասով.**

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

**Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝** *փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ՝ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*

**Կանոնագրքի 3.2.5 ենթակետի համաձայն՝** *փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:*

Պալատի խորհուրդը գտնում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված իրավական հետևանքը հնարավոր է կիրառել, եթե վարքագծի կանոնի մեջ նշված

հետևյալ փաստերն առկա լինեն, այն է՝

- Առկա է նախկին վստահորդ.
- Առկա է այլ (նոր) վստահորդ.
- Փաստաբանը իրավաբանական օգնություն է ցույց տալիս այլ (նոր) վստահորդին.
- Նախկին և այլ (նոր) վստահորդների շահերը հակասում են.
- Նախկին վստահորդը համաձայնություն չի տվել փաստաբանին իր այլ վստահորդին իրավաբանական օգնություն ցայց տալ իր դեմ:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Լուսինե Սահակյանի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

**Ա. Հանդիսացել է արդյո՞ք Արսեն Չիչյանը Լուսինե Սահակյանի վստահորդը:**

Ըստ սույն կարգապահական գործով հաստատված փաստերի, 2013թ. ԼԴ/0006/01/13 քրեական գործով փաստաբան Լուսինե Սահակյանը հանդիսացել է ամբաստանյալի դատավարական կարգավիճակ ունեցող Արսեն Չիչյանի և Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի պաշտպանը:

Անկախ այն փաստից, թե թիվ ԼԴ/0006/01/13 քրեական գործով ով է վճարել կամ պայմանագիր կնքել Արսեն Չիչյանին պաշտպանելու համար, Պալատի խորհուրդը գտնում է, որ Արսեն Չիչյանը նշված գործով հանդիսացել է փաստաբան Լուսինե Սահակյանի վստահորդը:

Պատահական չէ, որ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.4 կետում նշված սահմանումներում, որպես առանձին հասկացություններ են նշվել «վստահորդը» և «պատվիրատուն»: Ըստ այդմ, վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձը (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը, իսկ պատվիրատու է համարվում վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում և Փաստաբանի վարքագծի կանոնագրքում նշված վստահորդը այն անձն է, որին իրավաբանական օգնություն է ցույց տալիս փաստաբանը: Քրեական գործով այդ անձը կոչվում է նաև պաշտպանյալ:

Հետևաբար, եթե նույնիսկ Արսեն Չիչյանի համար այլ անձ է վճարել և պայմանավորվել փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, միևնույն է մեղադրյալ Արսեն Չիչյանի պաշտպանությունը փաստացի ստանձնելով, Լուսինե Սահակյանը ձեռք է բերել պաշտպանի, իսկ Արսեն Չիչյանը վստահորդի կարգավիճակ:

**Բ. Արդյո՞ք սույն գործով առկա վստահորդի շահերը հակասում են նախորդ վստահորդի շահերին:**

Խորհուրդն արձանագրում է, որ Դիմող Արսեն Չիչյանը՝ որպես ԵԿԴ/0479/02/14 գործով հայցվոր և պատասխանող Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանը հանդիսանում են դատավարական հակառակորդներ, հետևաբար

նրանց շահերի միջև կա հակասություն, քանի որ մեկի հաղթանակը գույքային առավելություն է տալու իրեն՝ ի վնաս մյուսի (այդ հակասությունը հաստատվում է նաև հայցի առարկայով):

**Գ. Արդյո՞ք Լուսինե Սահակյանը իրավաբանական օգնություն է ցույց տվել Արսեն Չիչյանի հակառակորդ կողմին:**

Սույն կարգապահական գործի փաստերով հաստատվում է, որ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի շահերի ներկայացուցչությունն իրականացրել է փաստաբան Լուսինե Սահակյանը, մասնավորապես՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել փաստաբան Լուսինե Սահակյանը: Նշված գործով, ինչպես վերը նշվել է, Արսեն Չիչյանը հանդիսանում է Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի հակառակորդ կողմը և նրանց շահերի միջև առկա է հակասություն:

**Դ. Արդյո՞ք առկա է նախորդ վստահորդի համաձայնությունը, որ Պատասխանողն իրավաբանական օգնություն տրամադրի նրա հետ հակադիր շահեր ունեցող անձանց.**

**Կարգի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *ապացույցներ են կողմի բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր փաստաթղթերը, իրեղեն ապացույցները (այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև ձայնագրություններն ու տեսագրությունները:*

**Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

**Կարգի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

**Նույն կարգի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *գրավոր փաստաթղթեր են հանդիսանում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:*

Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքով նախատեսված համաձայնությունը հարկավոր է բոլոր դեպքերում, երբ առկա են հակադիր շահեր փաստաբանի ներկա և նախկին վստահորդների միջև, ինչը փաստաբանի համար առաջացնում է պարտականություն իր նախկին վստահորդի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո միայն իրավաբանական օգնություն ցույց տալ նույն հարցով կամ գործով նոր վստահորդին: Փաստաբանի սույն պարտականությունը բխում է իր վստահորդի շահերով առաջնորդվելու և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու ընդհանուր պարտականությունից:

Սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով կհավաստվեր, որ Դիմողը գրավոր համաձայնություն է տվել Պատասխանողին իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Խորհրդի այս եզրահանգման համար հիմք են հանդիսացել նաև Դիմողի այն պնդումը, որ նման համաձայնություն Պատասխանողին չի տվել, ինչպես նաև Պատասխանողի այն փաստարկը, որ Դիմողի շահերը ներկայացնելու համար իրեն դիմել է Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսսյանը և վերջինիս հետ է կնքվել իրավաբանական ծառայություններ մատուցելու պայմանագիր, ուստի այդ պայմանագրում Դիմողի կողմից համաձայնություն տրամադրելու վերաբերյալ դրույթ առկա լինել չէր կարող:

***Պատասխանելով վերոհիշյալ Ա-Դ ենթակետերում նշված հարցերին, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Սահակյանի կողմից խախտվել են Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.5 ենթակետի պահանջները:***

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, երբ նա արդեն նախկին վստահորդ է:

Օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Տվյալ դեպքում Կանոնագրքի 3.2.5 ենթակետը վկայակոչող (բլանկետային) կանոն է և գործում է Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հետ միասին:

**7.2 Կարգապահական տույժի ընտրությունը.**

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Լուսինե Սահակյանի անձը բնութագրող հանգամանքները:

Տույժի տեսակն ընտրելիս, Խորհուրդը հաշվի առնում նաև, որ փաստաբան Լուսինե Սահակյանը նշված արարքը թույլ է տվել դիտավորությամբ, այսինքն գիտակցել է արարքի հակաօրինական բնույթը, մասնավորապես այն, որ Արսեն Չիչյանը իր վստահորդն է եղել և որ նոր գործով Արսեն Չիչյանի շահերը հակասում են մյուս վստահորդին շահերին:

Վարքագծի այս կանոնի խախտումը վնասում է փաստաբան-վստահորդ հարաբերությունների միջև անհրաժեշտ պայման հանդիսացող վստահությունը:

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝…..*

1) խիստ նկատողություն (…)

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների (…):

**Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով:

**7.3. Կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտման մասով.**

***Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝*** *փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:*

**Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝** *փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:*

Գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է, այսինքն՝ վստահորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք նա չի փոխանցի ուրիշների, և փաստաբանը պետք է այդ տեղեկատվության տիրապետողը լինի գաղտնիության հիմքի վրա: Հետևաբար՝ գաղտնիության պահպանումը փաստաբանի առաջնային պարտականությունն է: Փաստաբանի պարտականությունը գաղտնիության պահպանման վերաբերյալ ծառայում է արդարադատության արդյունավետ իրականացմանը և վստահորդի շահերին: Փաստաբանը պետք է պահպանի այն ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը, որի մասին նա տեղեկանում է իր մասնագիտական գործունեության ընթացքում:

Ինչ վերաբերում է գաղտնի տեղեկատվության առարկային և շրջանակին, ապա Օրենքով փաստաբանական գաղտնիքի հասկացությանը տրված է լայն սահմանում, որի ուժով փաստաբանի և վստահորդի հարաբերությունների ամբողջ շրջանակը՝ ներառյալ փոխանցված տեղեկատվությունը, ապացույցները, փաստաբանի կողմից տրամադրված

խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ընդգրկվում են փաստաբանական գաղտնիքի տիրույթի շրջանակի մեջ: Ընդ որում, դատելով Օրենքի նշյալ սահմանումից, փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը չի սահմանափակվում դատաքննության ընթացքում ներկայացված՝ գործի հանգամանքներով, ապացույցներով և այլ տվյալներով և ընդգրկում է նաև փաստաբան-վստահորդ շփումների այն մասը, որը չի արտացոլվել դատաքննության ընթացքում և դատարանի վճռում:

Որպեսզի փաստաբանը կարգապահական պատասխանատվության ենթարկվի Կանոնագրքի 3.2.8. ենթակետի խախտման համար, հարկավոր է թույլատրելի և վերաբերելի ապացույցների այնպիսի շրջանակ, որոնք կվկայեն հետևյալ երկու հանգամանքներից որևէ մեկի առկայության վերաբերյալ՝ նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման իրական, ուղղակի և հիմնավորված հավանականություն կամ այդ տեղեկատվության բացահայտմամբ նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնության ստեղծում:

Խորհուրդն արձանագրում է, որ նշյալ չափանիշներն ունեն գնահատողական բնույթ, որոնց առկայությունը պետք է Խորհրդի կողմից որոշվի յուրաքանչյուր վերաբերելի գործով՝ առանձին: Ընդ որում, նույնիսկ եթե առկա չէ վստահորդի գրավոր համաձայնությունը՝ ուղղված փաստաբանին նույն հարցով կամ գործով այլ վստահորդի ներկայացուցչությանը համաձայն լինելու մասին, դա չի կարող ինքնաբերաբար առաջացնել նաև Կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտում: Ինչպես նշվել է, նշյալ համաձայնությունը հարկավոր է բոլոր դեպքերում, երբ առկա են հակադիր շահեր փաստաբանի ներկա և նախկին վստահորդների միջև, ինչը փաստաբանի համար առաջացնում է պարտականություն իր նախկին վստահորդի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո միայն իրավաբանական օգնություն ցույց տալ նույն հարցով կամ գործով նոր վստահորդին: Փաստաբանի սույն պարտականությունը բխում է իր վստահորդի շահերով առաջնորդվելու և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու ընդհանուր պարտականությունից: Մինչդեռ, սույն պարագայում խոսք է գնում փաստաբանի մեկ ուրիշ պարտականության մասին՝ ցույց չտալ որևէ իրավաբանական օգնություն վստահորդին, երբ առկա է նախորդ վստահորդից ստացված գաղտնի տեղեկատվության բացահայտման կամ նոր վստահորդի համար անբարեխիղճ կերպով և ի վնաս նախորդ վստահորդի արտոնյալ վիճակ առաջանալու վտանգ: Դա իր բնույթով ինքնուրույն պարտականություն է, որը փաստաբանի կողմից պահպանվելու հանգամանքը յուրաքանչյուր վերաբերելի կարգապահական գործով Խորհրդի կողմից պետք է ստուգվի առանձին:

Սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեն, որ Արսեն Չիչյանի կողմից փաստաբան Լուսինե Սահակյանին հայտնված գաղտնի տեղեկատվության հրապարակման կամ Լուսինե Սահակյանի նոր վստահորդի մոտ անբարեխիղճ արտոնության առաջացման հնարավորություն, որպիսի պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Լուսինե Սահակյանի վարքագծում Կանոնագրքի 3.2.8 ենթակետի խախտումն ապացուցված չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Սահակյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.5 ենթակետի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.2.8 ենթակետ խախտման մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանին (արտոնագիր՝ 999) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 3.2.5 կետի և Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտման համար:***

***2. Փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի (արտոնագիր՝ 999) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով, 6 (վեց) ակադեմիական ժամ ժամաքանակով:***

***3. Փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի (արտոնագիր՝ 999) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.2.8 ենթակետի մասով՝ կարճել:***

***4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան

**06 սեպտեմբերի 2019թ.**
**թիվ ԿԳ/135-Ա**
**ք. Երևան**